ՏԱՃԿԱՀԱՅՊ

Կիլիկիոյ Ս. Կաթուղիկոսի Կոնդակը.

Կիլիկիոյ Շնորհազարդ Տ. Սահակ Կաթուղիկոսն անցեալ դեկտեմբեր 10-ին հրատարակել է կոնդակ, որով պատուէր է տալիս Կիլիկիոյ թեմերի իւր բոլոր ատենադրեալ հոգևոր վարչութիւններին ընդարձակել պատկառութեան օրերի թիւը համաձայն Ընդհանրական Հայրապետի Տ. Տ. Գէորգ Ե. Վեհափառ Կաթուղիկոսի այդ մասին յատուկ Կոնդակով արած առնօրէնութեան։

Կիլիկեան Ճեմարան.

Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթուղիկոսն անցեալ 1913 թ. աշնան ընդարձակ այցելութիւն է արել իւր հօտին՝ շրջելով բոլոր վիճակները։ Անցեալ հոկտեմբեր 13-ին, Մեծ Յօրելեանի օրը, Այնթափի մէջ կաթուղիկոսի ներկայութեամբ կատարուել է բարձրագոյն վարժարանի պաշտօնական բացումն, և Տ. Սահակ կաթուղիկոսն կարգադրել է այդ վարժարանը կոչելու Կիլիկեան Ճեմարան։

Այնթափի այս բարձրագոյն վարժարանի բացման առթիւ Ազգիս Վեհափառ Տ. Տ. Գէորգ Ե. Հայրապետն բացման օրն ուղարկել է օրհնութեան և քաջալերական հեռագիր, որի առթիւ Ճեմարանի վարչութիւնն երախտագիտական թուղթ է գրել Վեհափառ Կաթուղիկոսին։ Նոյն վարչութիւնը հաղորդում է նաև, որ շուտով կ՝ուղարկեն Նորին Վեհափառութեան մանրամասն տեղեկագիր Ճեմարանի մասին, աւելացնելով հետևեալը. «Ճեմարանս 1912 սեպտեմբերին բացուած է յատկապէս պատրաստուած համալսարանական Տեսչով մը և գիտութեանց ուսուցչով մը, և Ուսուցչական մարմինը, առ հարկի, կազմուած կամ լրացուած է տեղացի տրամադրելի ուսուցիչներէն՝ ընտրանօք, և հետզհետէ հասնելով մեզ նախապէս Ամերիկեան համալսարաններն զրկուած Ուսուցիչները՝ օր մը Ճեմարանիս Ուսուցչական ամբողջ Մարմինը պէտք է կազմուի համալսարանական մասնագէտ ուսուցիչներէ»։